

# ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

## ԷԿՈՒՄԵՆԻԿ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ ՕԴԵՍԱՅՈՒՄ

Սույն թվականի սեպտեմբերի 29—30 օրերին Օդեսայում կայացավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի անդամ արտասահմանյան որոշ Եկեղեցիների և ՍՍՀՄ-ում գտնվող Եկեղեցիների ու կրոնական հարանվանությունների ներկայացուցիչ երիտասարդ հոգևորականների համատեղ էկումենիկ սեմինար:

Սեմինարին մասնակցում էին ԳՖՀ-ի, ԱՄՆ-ի, Գայանայի, Լիբանանի, Սենեգալի, Շվեդիայի և ՍՍՀՄ-ում գործող քրիստոնեական հարանվանությունների ու հոգևոր կրթական հաստատությունների ներկայացուցիչներ:

Ժողովը վարում էր ԵՀԽ-ի քարտուղարության անդամ Սիոնգ Ֆոնգ Չանը:

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ սույն ժողովին Հայ Առաքելական Եկեղեցու կողմից մասնակցում էին Տ. Արրահամ աբղ. Մկրտչյանը և Հովակիմ սրկ. Քիլեջյանը:

Սեմինարի բացումը տեղի ունեցավ Օդեսայի հոգևոր սեմինարիայի հանդիսությունների դահլիճում: Բացման հանդիսությանը ներկա էր և ողջույնի խոսք ասաց Օդեսայի ու Խերսոնի միտրոպոլիտ Սերգիը:

Սեմինարի քննարկման թեման էր՝ «Եկեղեցին և սոցիալական բարեփոխությունները»:

Ի թիվս այլ զեկուցումների, հիշյալ թեմայով զեկուցում կարդաց նաև Տ. Արրահամ աբղ. Մկրտչյանը: Հայր սուրբն իր խոսքի մեջ պատմեց Հայ Եկեղեցու պատմական անցյալի, ժամանակակից կրոնական ու սոցիալական խնդիրների և Հայ Եկեղեցու ազգային դերի մասին: Նա իր խոսքի մեջ անդրադարձավ նաև Ղարաբաղյան հարցի շուրջ ստեղծված տագնապալի վիճակին՝ կանգ առնելով վերոհիշյալ հարցի առաջացման պատմական պատճառների վրա, նշելով, որ այդ հարցը կլուծվի արդարացիորեն:

Սեմինարի ավարտին որոշվեց ստեղծել ՍՍՀՄ-ում գործող Եկեղեցիների ու կրոնական հարանվանությունների երիտասարդ միաբանների հանձնախումբ, որը պիտի զբաղվի կրոնական հարանվանությունների միջև կապերի հաստատման, ինֆորմացիայի փոխանակման և փոխօգնության հարցերով:

Սեմինարի որոշումներն ամփոփվեցին հատուկ կազմված մի հաղորդագրության մեջ, որն առաքվեց ՍՍՀՄ-ում գտնվող բոլոր քրիստոնեական կազմակերպությունների պետերին:

ԹՂԹԱԿԻՑ